

## ՄԻՋՆԱԴԱՐ

### MIDDLE AGES

Եւրոպայի մէջ, Միջնադարը (Middle Ages), որպէս պատմական ժամանակաշրջան, կ'իյնայ Հին Դարու եւ Նոր Դարու միջեւ, մօտաւորապէս տասը դար տեւողութեամբ: Սակայն թէ՛ Միջնադարու սկիզբը եւ թէ՛ անոր վերջաւորութիւնը շատ յստակ չեն եւ կը տարբերին՝ երկրէ երկիր: Շատեր, Միջնադարու որպէս սկիզբ կ'ընդունին Հռոմէական Կայսրութեան անկումը՝ 476 թուականը իսկ Միջնադարու որպէս աւարտ՝ Ամերիկայի յայտնաբերումը՝ 1492 թուականը: Նաեւ յատկանշական է Միջնադարէն Նոր Դար անցման ժամանակաշրջանը (15-րդ – 16-րդ դար), որ կը կոչուի **Վերածնունդ** (Renaissance):

Եւրոպայի մէջ, Միջնադարու փիլիսոփայութիւնը անքակտելիօրէն կապուած է Քրիստոնէութեան, այն աստիճան որ ժամանակաշրջանը կոչուած է նաեւ *Քրիստոնէայ Միջնադար*: Արդ, Քրիստոնէայ Միջնադարուն, արեւմտեան (կամ յունահռոմէական) փիլիսոփայութիւնը հետզհետէ կը կորսնցնէ գիտութիւններու մէջ ունեցած իր առաջնակարգ դիրքը եւ կը դառնայ քրիստոնէական «աստուածաբանութեան աղախինը» (լատ.՝ *anna theologica*). այս պատճառով նաեւ փիլիսոփայական բարոյագիտութիւնը տարագ կը փոխէ, համապատասխանելու կամ յարմարելու համար քրիստոնէական հաւատքի սկզբունքներուն: Առաջին շրջանը, ինչպէս արդէն նշեցինք, ծանօթ է նաեւ *աստուածիմաստութիւն* (յուն.՝ *theosophía*, տե՛ս նաեւ էջ 60-ի ծանօթագրութիւնը) եզրոյթով, որ հաւաքական անուանարկումն է փիլիսոփայական ու աստուածաբանական մտածողութեան, ուր ներհայեցողութեամբ Աստուած կամ աստուածայինը իմանալու անմիջական ձգտում մը կայ:

Միջնադարու փիլիսոփայութեան հիմնական նիւթը՝ քրիստոնէական հաւատքի եւ գիտութեան յարաբերութիւնն է: Իսկ բարոյագիտութեան մարզէն ներս, հնադարեան Պլատոնի չորս գլխաւոր առաքիներութիւններուն (իմաստութեան, արիութեան, խոհեմութեան եւ արդարութեան) վրայ կու գային աւելնալու քրիստոնէական երեք առաքիներութիւնները՝ *հաւատք*, *յոյս* եւ *սէր*, որոնք հիմնականօրէն կրօնական բնոյթ կը կրեն.- հաւատք՝ Աստուծոյ հանդէպ, *յոյս*՝ Աստուծոյ ողորմածութեան հանդէպ եւ *սէր*՝ առ Աստուած: Մինչ հնադարեան բարոյագիտութեան մեկնակէտը բնութեան օրէնքն էր (այսինքն՝ մարդը, որպէս կենդանի էակ՝ բնութեան մէջ), Միջնադարուն այդ մեկնակէտը դարձաւ մարդու դիրքորոշումը Աստուծոյ հանդէպ եւ այս կապէն բխած՝ բարոյագիտական առաջադրութիւնները: